# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ԳԴԱԿ ՍՊԸ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/08 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 1 | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՎՈՐԻ ՊԱՏՄՈՒՃԱՆ /համաձայն «Դատավորի պատմուճանի նկարագրությունը հաստատելու մասին» ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 16-ի N 15Լ որոշման/ (առավելագույնը` 200 հատ) 1. Լայն ձևվածքով երկար թիկնոց է` կարված բարձր որակի ատլասե կտորից /վիսկոզա 35% (շեղում` - + 2%) և պոլիէսթեր 65% (շեղում` - + 2%), խտությունը` ոչ պակաս 210գ/մ2/` սև գույնի, շատ քիչ զգալի նուրբ փայլով, քիչ ճմրթվող, որի պարանոցը ձևավորված է տղամարդու վերնաշապիկին բնորոշ տիպօրինակ փոքր օձիքով` սև թավշյա (բարձրորակ, խիտ հյուսվածքով գործվածք) կտորից: 2. Պատմուճանի դիմացի մասը` կոճակափեշերը` սկսած ուսակարերից մինչև ներքև ձևավորած է 10 սմ լայնությամբ թավշյա կոճգամով, որի տակ թաքնված են կոճակները: Ուսակարերը զարդարված են բաց սեղմոններով: 3. Պատմուճանի ամբողջ դիմացի մասը` կոճակափեշերը, օձիքը և թևքածալերը կարված են մուգ սև բարձրորակ թավշյա կտորից /100% սինթետիկ գործվածքից, խտություն` ոչ պակաս 210գ/մ2/: Ատլասի և թավիշի միացման եզրերը ընդգծվում են նույն գույնի պարանի տեսք ունեցող ժապավենով: 4. Պատմուճանի թևքերը լայն են ու ազատ, եզրերը ձևավորված են 15 սմ լայնությամբ սև թավշյա թևքածալերով /100% սինթետիկ գործվածքից, խտություն` ոչ պակաս 210գ/մ2/: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը Գնորդի պահեստ իրականացնում է Վաճառողը` իր միջոցների հաշվին, նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն: Ապրանքները կարվում են անհատական պատվերով: Գնորդից էլեկտրոնային փոստի միջոցով կամ բանավոր պատվերի հայտը ստանալու օրվանից հետո մեկ |

| | |
|---|---|
| | աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողը պետք է այցելի Գնորդի կողմից նշված հասցե (ք. Երևան, Վ. Սարգսյան 5 կամ Կորյունի 15/1)՝ չափսերը վերցնելու համար: Պատվերը ձևավորվում է չափսերը վերցնելու պահից: Առաջին խմբաքանակը մատակարարելիս Վաճառողը պետք է ներկայացնի գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Պատմուճանների ամբողջ քանակը պետք է պատրաստվի միևնույն գործվածքից: Ապրանքները (բոլոր նյութերը) պետք է լինեն չօգտագործված: Ապրանքները պետք է լինեն փաթեթավորված, համապատասխան մակնշումով (արտադրության տարեթիվը, արտադրողի տվյալները, ինչպես նաև դատավորի անունը և ազգանունը): |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ГДАК ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/08 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 1 | |